ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-26/102

23.04.2026թ

ք.Երևան

«ԱԼԵՔՍԱՐՍ» ՍՊԸ, /պետական գրանցման համար՝ 278.110.936431, պետական գրանցման ամսաթիվ՝29/11/2016 , ՀՎՀՀ՝00471352, իրավաբանական հասցե՝ Հունան Ավետիսյան փ. /32 Նոր Նորք 0092, Երևան Հայաստան , ի դեմս տնօրեն՝ Կարեն Բաղդասարյանի (այսուհետ՝ Վաճառող), մի կողմից ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը ի դեմս գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանի, ով գործում է էկոպարեկային ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է որպես սեփականություն Գնորդին հանձնել պարենային կամ ոչ պարենային ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է որպես սեփականություն ընդունել և վճարել Ապրանքի համար:

2.Պայմանագրի գինը և վճարման պայմանները

2.1 Սույն Պայմանագրի 1.1-ով սահմանված Ապրանքների արժեքը կախված է Գնորդի ընտրած Ապրանքների քանակից և տեսակից, որն իր մեջ ներառում է ՀՀ օրենսդրությամբ կիրառելի հարկերը և պարտադիր այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2.1 Գնորդը հաստատում է, որ բոլոր վճարումները կատարվելու են իր կողմից, կամ իր լիազոր ներկայացուցչի միջոցով:

3.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 ***Վաճառողը իրավունք ունի***

3.1.1 Սույն Պայմանագրի 2.2 կետով վճարման պայման նախատեսված լինելու դեպքում համապատասխան հանձնված Ապրանքի համար Գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների համապատասխան:

3.2 ***Վաճառողը պարտավոր է***

3.2.1 Գնորդին հանձնել պատշաճ որակի Ապրանք:

3.2.2 Գնորդին հանձնել Երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.2.3 Կողմերի կողմից պայմանավորվածություն ունենալու դեպքում օրենքով սահմանված կերպով կատարել վաճառված ապրանքների հետվերադարձ:

3.2.4 Գնորդի կողմից ՀԴՄ կտրոնով գնված ապրանքների համար դուրս գրել հարկային հաշիվ:

3.3 ***Գնորդն իրավունք ունի***

3.3.1 Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է հանձնել սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Ապրանքը:

3.3.2 Վաճառողի կողմից Ապրանքի թերությունների մասին նախապայման չսահմանելու դեպքում պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու Ապրանքի թերությունները:

3.3.3 Վաճառողի կողմից սույն Պայմանագրի 3.2.2 ենթակետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում պահանջել Ապրանքի գնի նվազեցում կամ Պայմանագրի լուծում, եթե Վաճառողը չի ապացուցում, որ Գնորդը գիտեր կամ պետք է իմանար Ապրանքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին:

4. **Անհաղթահարելի ուժի ազդեցություն /Ֆորս Մաժոր**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում, Կողմը, որի պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտում է անհաղթահարելի ուժը, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին:

5.Այլ պայմաններ

5.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է Կողմերից մեկի կողմից մյուս կողմին նախապես մեկ ամիս առաջ ծանուցելու միջոցով:

5.2 Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի կողմից:

5.3 Սույն Պայմանագրի հետ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում պայմանագիրը լուծվում է դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

5.4 Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, ե

5.5 Երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայություն Երևան Ա. Արմենակյան 129 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011023265 ՀՎՀՀ 00476409 Գլխավոր քարտուղար՝ Լուսինե Ալեքսանյան ստորագրություն	«ԱԼԵՔՍԱՐՍ» ՍՊԸ ք. Երևան Հունան Ավետիսյան փ. /32 Նոր Նորք 0092 Բանկ՝ Ակբա Բանկ ԲԲԸ Հ/Հ 220098539327000 ՀՎՀՀ 00471352 Տնօրեն՝ Կարեն Բարիրասարյան ստորագրություն